ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Միգրացիայի և քաղաքացիության ոլորտ
քաղաքականության իրականացմա
վարչության պետ Ի. Մկրտչյանի

19.02.2026

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի կողմից

կատարված աշխատանքների վերաբերյալ

(12.12.2025-19.02.2026թթ.)

Հարգելի՛ տիկին Մկրտչյան,

2025 թվականի դեկտեմբերի 12-ից 2026 թվականի փետրվարի 19-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՈՔԻ վարչության Ծրագրերի իրականացման և վիճակագրության բաժնում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Խմբագրել և համակարգել եմ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված, այդ թվում տարեկան ամփոփիչ վիճակագրական տվյալները՝ ՀՀ քաղաքացիության, ապաստան հայցած և փախստական ճանաչված անձանց, օտերարկերացիների կացության կարգավիճակների, ինչպես նաև Հ անձը հաստատող փաստաթղթերի վերաբերյալ:
2. Համադրել և վերլուծել եմ տարբեր գերատեսչություններից ստացված, ինչպես նաև սեփական ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալները:
3. Պատրաստել եմ վիճակագրական աղյուսակներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջազգային և իրավական տերմինաբանությանը, ինչպես նա իրականացրել եմ վիճակագրական ցուցանիշների խմբավորում և համադրություն ըստ թեմատիկ ուղղությունների՝ ներառելով 2025 թվականի ամփոփիչ վիճակագրությունը:
4. Իրականացրել եմ 2025 թվականի միգրացիոն միտումների համապարփակ վերլուծություն գնահատելով ներգաղթի, արտագաղթի և սահմանահատումների դինամիկան, ինչպես

նաև ներկայացնելով դրանց պատճառահետևանքային և կանխատեսողական գնահատականներ:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ՝ ______________________ Անի Հակոբյան

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ «գերազանց»

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՕՔԻՎ պետ՝______________________ Ի. Մկրտչյանին